



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպօրին Հօր Յիսուս, Կուր ինձ իմասպօրին զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Յոյս իմ եւ դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առնէր զբըղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:

ԱՊՈԹՔ

Ամենակարող Աստուած, լսէ՛ ձայնը մեր աղաչանքին, լուսաւորէ մթութիւնը մեր հոգիին, եւ Քու աստուածութեամբդ բժշկէ խորունկ կսկիծը մեր սրտին: Քեզի կը դիմենք ու բեզմէ կը խնդրենք, որ օգնես մեզ: Օգնէ, որպէսզի չկորսնցնենք ուղղութիւնը դէպի Քեզ գալու: Օգնէ, որովհետեւ Դուն ես հանգիստը՝ մեր խոովին, բժիշկը՝ մեր ցաւերուն, միփարիչը՝ մեր սուգին, բալասանը՝ մեր վերքերուն, լոյսը՝ մեր աչքերուն, աղբը՝ մեր կեանքին, խաղաղութիւնը՝ մեր սրտերուն, Սէրը՝ մեր բնտանիքներուն: Պահէ ու պահպանէ մեզ, բոլոր տեսակի նեղութիւններէն: Զօրացուր մեզ, որպէսզի կարենանք բարի պատերազմը պատերազմելու, հաւատքը պահելու, եւ արդարութեան պսակին արժանանալու: Սպառագինէ մեզ, հաւատքի վահանով, փրկութեան սաղաւարտով, Սուրբ Հոգիի սուրով, որպէսզի դէմ դնենք չարին արձակած միացող նետերուն: Միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմէն մինչեւ յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՍՈՍ 91

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱԽԷՆԸ

Ան՝ որ Բարձրեալին Ամենակարողին պաշտպանութեան տակ կը մտնէ,

անոր հովանիին տակ հանգիստ պիտի գտնէ:

Այնպիսին Տիրոջ պիտի ըսէ. "Իմ ապաստանս եւ ապաւենս ես, ով Աստուած, ես քեզի կը վստահիմ":

Ան է որ քեզ պիտի փրկէ Որսացողին որոգայթէն եւ խոռվիչ չար խօսքերէն:

Իր թելերով պիտի ծածկէ քեզ,

եւ իր հովանիին տակ ապաստան պիտի գտնես:

Իր ճշմարտութիւնը իբրեւ զրահ՝ պիտի պատէ ու պաշտպանէ քեզ:

Ոչ գիշերուան վտանգները պիտի կրնան քեզ վախցնել,

ոչ ցերեկուան անակնկալ փորձանքները.

ոչ մութին մէջ շրջող մահը, ոչ ալ կէսօրին հարուածող աղէտը:

Նոյնիսկ եթէ հազար հոգի իյնան ձախիդ,

եւ եթէ տասը հազար հոգի իյնան աջիդ,

բայց ոեւէ հարուած բնաւ քեզի պիտի չմօտենայ:

Սակայն պիտի փու աչքերովդ տեսնես՝

թէ Աստուած ինչպէս կը հատուցանէ ամբարիշտներուն:

Այո, ով Տէր, իմ ապաւենս դուն ես:

Դուն՝ որ Բարձրեալը ապաստանդ դարձուցիր՝

ոեւէ չարիք պիտի չհասնի քեզի,

ոեւէ փորձանք պիտի չմօտենայ փու տանդ:

Տէրը քեզի համար իր հրեշտակներուն պիտի պատուիրէ,

որ պահպանեն քեզ՝ ուր որ ալ երթաս:

Իրենց ձեռքերուն վրայ պիտի բռնեն քեզ,

որպէսզի չըլլայ որ ոտդ քարի մը զարնուի:

Առիւծներու եւ օձերու վրայէն պիտի փախաս,

ահեղ առիւծ ու վիշապ՝ ոտքի տակ պիտի առնես:

Տէրը կ'ըսէ.՝ "Քանի սիրով ինծի կապուեցաւ՝ պիտի ազատեմ զինք.

ապաստան պիտի ըլլամ իրեն, քանի որ զիս իբր Տէր նանչցաւ:

Երբ զիս կանչէ պատասխան պիտի տամ իրեն,

նեղութեան մէջ իր կողմին պիտի ըլլամ,

զինք պիտի փրկեմ ու փառաւորեմ:

Զինք երկար կեանքով պիտի վարձատրեմ,

եւ փրկութիւնս ցոյց պիտի տամ իրեն":

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱՔԷՆԸ

Հեղափոխականօրէն 91-րդ Սաղմոսը չունի հեղինակի յարակացում, այնպէս ինչպէս միւս Սաղմոսներու պարագային: Տեսակէտ կայ, որ իբրեւ հեղինակ կ'ընդունուի Մովսէս, ոմանք զայն կը վերագրեն Դաւիթի, իսկ ուրիշներ փաճարի երաժիշտներէն մէկը: Ամէն պարագայի, ով որ ալ է հեղինակը, հեղափոխական Սաղմոս մըն է, որուն բովանդակութիւնը կու գայ ցոյց փառու, թէ հեղինակը, այնպիսի վստահութեամբ եւ ամբողջական հաւատքով կը ներկայացնէ այս փողերը: Ամբողջական ապահովութիւն անոր, որ անվերապահ հաւատքով ու սիրով կը վստահի Ամենակարողին, ու Անոր հետ հաղորդակ-ցութեան մէջ է: Միակ ապահով փողը զգնելու Աստուծոյ քով է: Հաւատացեալը ունի ապահովութիւնը, նոյնիսկ Աստուած թելադրած է որ հրեշտակներուն պատուիրէ որպէսզի զինք օգնեն: Վախէն ու սարսափէն ազատեն: Միայն թէ զգոյշ պէտք է ըլլալ, որ այս ազատագրումը, ոչ անպայմանօրէն ֆիզիքական, այլ՝ ամենակարեւորը՝ հոգեւոր առումով: Որովհետեւ կրնանք սխալ հասկնալ, երբ առնենք միայն ֆիզիքական իմաստով: Այնպէս կը կարծենք, որ հաւատացեալը երբեք փորձութիւններու պիտի չհանդիպի: Երբեք նեղութիւն պիտի չունենայ: Այդպէս չէ: Այլ խոստումը որ կայ, ապահովութիւնը որ կայ շար աւելի կապուած է հոգիին, որպէսզի չըլլայ թէ հոգին վնասուի, հոգին կորսուի: Այնպէս ինչպէս առիթով մը Քրիստոս պիտի ըսէր. "Մի վախնաք անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, որովհետեւ պիտի ըլլան պարագաներ, որ մարմինը սպաննեն, այդպէս ալ զգուշացուց Քրիստոս իր աշակերտներուն, ձեզ պիտի հաւաքեն, ձեզ պիտի սպաննեն: Բայց նաեւ յիշեցուց, այլ նաեւ վախցէք անկէ, որ մարմինն ու հոգին գեղեցիկ արժանի կ'ընեն": Սկսինք: Ան, որ Բարձրեալին, Ամենակարողին պաշտպանութեան փակ կը մտնէ, անոր հովանիին փակ հանգիստ պիտի գտնէ: Մնայուն Աստուծոյ նեկայութեան ըլլալ: Մնայուն Իրմէ սպասել եւ ակնկալել մեր փրկութիւնը, պաշտպանութիւնը: Մէկ այլ ուրիշ Սաղմոսի մը մէջ կը կարդանք, "Գիշեր ցերեկ Զու մասիդ կը մտածեմ": Մնայուն արարայարութեամբ. "Իմ ապաստանս եւ ապաւնս ես, ով Աստուած, ես Քեզի կը վստահիմ": Յաճախ կայ այն փեսակէտը, ուր կ'ըսէ. "Բայց ուր մնաց մարդուն բաժինը": Կարծէք այստեղ կը նուազացնէ մարդուն կարողութիւնը, արժէքը: Ընդհակառակը, առաւել եւս իմաստ կու տայ, եւ գիտակցութիւնը, թէ մարդուն ունեցած կարողութեան աղբիւրը Աստուած է: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. "Ինչ որ եմ, Քրիստոսով եմ", "Ես չեմ որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոսն է որ կ'ապրի իմ մէջս": Այսինքն ինչ, Պօղոս Առաքեալ այլեւս անարժէք է": Ընդհակառակը, նոր իմաստ կը ստանայ, իր էութիւնը նոր դիմագիծ կը ստանայ, Քրիստոսով նորոգուած: Շարունակելով, Ան որ քեզ պիտի փրկէ Որսացողին որոգայթէն: Իր թելերով պիտի ծածկէ: Իր ճշմարտութիւնը իբրեւ գրահ: Յիշենք Պօղոս Առաքեալի խօսքը, "Ճշմարտութեամբ ամրապնդեցէք ձեր մէջքը, արդարութիւնը հագէք գրահի պէս: Եւ որովհետեւ պիտի պահէ ու պահպանէ, ահա թէ ինչու ոչ գիշերուան վտանգները, ոչ ցերեկուան անակնկալ փորձանքները, ոչ մութին մէջ, եւ ոչ ալ կէսօրուան հարուածող աղէտը պիտի վախցնեն: Եւ որովհետեւ Բարձրեալը ապստանդ դարձուցիր՝ ոեւէ չարիք պիտի չհասնի քեզի, ոեւէ փորձանք պիտի չմօտենայ քու փառք: Այս բոլորը սակայն մեքենական չեն, այլ՝ Աստուծոյ փրկած խոստումին դիմաց, նաեւ մեր հնազանդութիւնն ու հաւատարմութիւնը: Հեղափոխական հապտածը 11-12հմր, ուր կը հանդիպինք Քրիստոսի փորձութեան ժամանակ, երբ Չարը այս հապտածը կը մէջբերէ: Այս խոստումը փրկուած ըլլալով հանդերձ, Քրիստոսի դէպքը կը յիշեցնէ, որ չփորձես քու Տէր Աստուծոյ: Առի՞ծ եւ վիշապ ուրքի փակ առնես: Չարին փորձութիւնները, որոնք մէջ մը կու գան առի՞ծի պէս մոնչող, հալածող, հարուածող, սպաննող, յաճախ նաեւ վիշապի պէս, որ այս պարագային, վիշապը նաեւ խափելու իր կերպարին մէջ: Այս վերջին հարուածը, ուր յարակօրէն ցոյց կու տայ, որ Աստուծոյ փրկած այս խոստումները եւ անոնց կարարումը կա-խում ունի մեր Իրեն սիրով կապուած ըլլալուն հետ, եւ զինք ճանչնալու իբրեւ Տէր: Ուստի, երբ կանչենք զինք պարասխան փայ մեզի, նեղութեան մէջ մեր կողքին պիտի ըլլայ, եւ ոչ միայն պիտի փրկէ մեզ, այլ նաեւ փառաւորէ: Երկար կեանքով վարձաւորէ եւ փրկութիւնը ցոյց պիտի տայ:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ քաղմամեղիս:**